

Համարը N 160
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ 2007.05.25/14(55)
Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 04.06.2007

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Ստեփանակերտ
Ընդունման ամսաթիվը 27.04.2007
Ստորագրման ամսաթիվը 27.04.2007
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՊԱՅԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ» ԼԻՑԵՆԶԻԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՅԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» ապրիլի 2007թ.

N 160

ք.Ստեփանակերտ

«**ՊԱՅԹԵՑՄԱՆ** ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ» ԼԻՑԵՆԶԻԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՅԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Հաստատել «**Պայթեցման** աշխատանքների կատարում» լիցենզավորվող գործունեության տեսակով զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասնագետների մասնագիտական որակավորման ստուգման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՂՀ ԿԱՐՉԱՊԵՏ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2007թ. ապրիլի «27»-ի
թիվ 160 որոշման

Կ Ա Ր Գ

«**ՊԱՅԹԵՑՄԱՆ** ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ» ԼԻՑԵՆԶԻԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՅԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ

Սույն կարգի դրույթները վերաբերում են «**Պայթեցման** աշխատանքների կատարում» լիցենզավորվող գործունեության տեսակով զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասնագետներին (այսուհետ՝ **պայթեցման** աշխատանքների մասնագետ):

Պայթեցման աշխատանքների մասնագետների մասնագիտական որակավորման ստուգմանը (այսուհետ՝ որակավորման ստուգում) կարող են մասնակցել այն անձինք, ովքեր՝

ա) ունեն 18 և ավելի տարիք.

բ) ուսանել են **պայթեցման** աշխատանքների կատարման անվտանգության կանոնները (**պայթեցման** աշխատանքների կատարման ուսուցում իրականացնելու իրավասություն ունեցող կազմակերպություններում) և ստացել են համապատասխան վկայական.

գ) չեն տառապում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի թիվ 398 որոշման 1-ին մասի «գ» կետով հաստատված արտադրական միջավայրի և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների հետ կապված աշխատանքի թուլյատրման ընդհանուր բժշկական հակացուցումների ցանկում նշված հիվանդություններով և դրա մասին ունեն համապատասխան բժշկական տեղեկանք:

3. Որակավորման ստուգման համար **Այայթեցման** աշխատանքների մասնագետների որակավորման ստուգման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

ա) անձնագրի պատճենը,

բ) աշխատանքային գրքույկի պատճենը,

գ) բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթության դիպլոմի (վկայականի) պատճենը կամ **Այայթեցման** աշխատանքներ կատարելու համար նախկինում ստացված վկայականի պատճենը,

դ) 3 x 4սմ չափսերի երկու գունավոր լուսանկար:

4. Որակավորման ստուգումն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովը: Հանձնաժողովը կազմված է 7 անձից՝ նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և անդամներից:

5. Հանձնաժողովը՝

ա) կազմակերպում է դիմողների որակավորման ստուգման աշխատանքները,

բ) որոշում է հայտատուների որակավորման ստուգման անցկացման վայրը, օրը, ժամը և դրա մասին տալիս է հայտարարություն,

գ) ընդունում է որակավորման ստուգման մասին դրական կամ բացասական որոշումներ,

դ) քննում է դիմողների բողոքները՝ կապված ստուգման կազմակերպման հետ,

ե) իրականացնում է սույն կարգով նախատեսված այլ լիազորություններ:

6. Որակավորման ստուգման անցկացման վայրի, օրվա և ժամի մասին հայտատուներն ու հանձնաժողովի անդամները տեղեկացվում են քննությունից առնվազն 7 օր առաջ՝ հանձնաժողովի նախագահի գրությամբ:

7. Որակավորման ստուգումներն անցկացվում են պարբերաբար, հանձնաժողովի նախագահի որոշմամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան 2 ամիսը մեկ անգամ, եթե **Այայթեցման** աշխատանքների մասնագետի որակավորում ստանալու համար եղել է առնվազն մեկ հայտ:

8. Որակավորման ստուգումն իրականացվում է հայերենով, դռնբաց կարգով: Որակավորման ստուգման ընթացակարգը կարող է տեսագրվել, ձայնագրվել կամ նկարահանվել:

9. Որակավորման ստուգումը կատարվում է գրավոր, քննական հարցաթերթիկներով՝ բաղկացած 7 հարցից՝ հաստատված հանձնաժողովի նախագահի կողմից: Քննության ժամանակ չի թույլատրվում օգտվել իրավական կամ այլ փաստաթղթերից:

10. Որակավորման հարցաթերթիկները պետք է ներառեն՝

ա) 2 հարց՝ տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությունից,

բ) 3 հարց՝ **Այայթեցման** աշխատանքների կատարման, պայթուցիկ նյութերի և **Այայթեցման** միջոցների արտադրության, տեղափոխման, պահպանման և օգտագործման պահանջների մասին,

գ) 2 հարց՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում օգտագործվող պայթուցիկ նյութերի տեսակների, դրանց բնութագրիչների մասին:

11. Յուրաքանչյուր հայտատուի որակավորման ստուգման համար տրվում է 90 րոպե ժամանակ:

12. Որակավորման ստուգման արդյունքները գնահատում է հանձնաժողովը: Չորս և ավելի հարցերին ճիշտ պատասխանած հայտատուն համարվում է որակավորման ստուգումն անցած:

13. Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

14. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը: Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

15. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ: Հայտատուն համարվում է որակավորման ստուգումն անցած, եթե նրա օգտին քվեարկել է նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների կեսից ավելին կամ կեսը: Որակավորման ստուգման արդյունքներն ամփոփվում են եզրակացությամբ:

16. Որակավորման ստուգման մասին եզրակացությունն ստորագրվում է հանձնաժողովի նիստին մասնակցող անդամների կողմից: Եզրակացության մեկ օրինակը տրվում է հայտատուին, մյուս օրինակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվում է հանձնաժողովի արխիվում:

17. Հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում է: Ստուգումների արդյունքների մասին որակավորվող անձին պատշաճ ձևով հայտնվում է, կամ դրանք նրան են ուղարկվում ոչ ուշ, քան ստուգումների ավարտի օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում:

18. Որակավորման ստուգման արդյունքները կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով՝ դրանք ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

19. Որակավորման ստուգմանը չներկայացած հայտատուներն իրավունք ունեն մասնակցելու հաջորդ ստուգմանը:

20. Որակավորման ստուգման դրական արդյունքների դեպքում **Այայթեցման** աշխատանքների մասնագետին

տրվում է որակավորման վկայական՝ անժամկետ: Որակավորման ստուգման դրական արդյունքների գործողության ժամկետը կարող է սահմանափակվել միայն օրենքով:

21. Որակավորման վկայականում նշվում են՝

ա) որակավորման վկայականի համարը,

բ) որակավորման ստուգում անցած հայտատուի անունը, ազգանունը, հայրանունը,

գ) որակավորման վկայական տվող մարմնի անվանումը,

դ) որակավորման վկայականը տալու օրը, ամիսը, տարեթիվը:

22. Որակավորման վկայականի վրա փակցվում է ստուգում անցած անձի գունավոր լուսանկարը:

23. Որակավորման վկայականը վավերացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարի ստորագրությամբ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գինանշանի պատկերով կնիքով:

24. Օտարերկրյա պետությունների կողմից **Այայթեցման** աշխատանքների մասնագետներին տրված մասնագիտական որակավորման փաստաթղթերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրավական ուժ ունեն:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Ս. Գրիգորյան